ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան 0010, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ,
Հեռ.՝ +37491700974, **Էլ. հասցե՝** foi@foi.am,
www.foi.am

25.08.2023
351-62

Ոստիկանության պետ
Արամ Հովհաննիսյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Հովհաննիսյան,

ՀՀ քրեական օրենսգրքի 340-րդ հոդվածով նախատեսված արարքի հատկանիշներով հարուցված վարույթների վերաբերյալ Ազգային անվտանգության ծառայությանը ներկայացված հարցմանն ի պատասխան ԱԱԾ-ն ի թիվս այլնի նշել է, որ նշված հոդվածով նախաքննություն կատարում են նաեւ ՀՀ քննչական կոմիտեի քննիչները, և ըստ այդմ առաջարկել է նշված հանցանքների վերաբերյալ ամփոփ տեղեկություններ ստանալ ոստիկանությունից (ինֆորմացիոն կենտրոնից)

Ելնելով վերոգրյալից եւ համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. 2022 թվականի հունվարի 1-ից մինչ օրս ՀՀ քրեական օրենսգրքի 340-րդ հոդվածով նախատեսված՝ ռազմական նշանակության արտադրանքի, տեխնիկայի, հրազենի կամ այլ նյութերի, սարքերի, առարկաների, ապրանքների մաքսանենգության քանի՞ դեպք է արձանագրվել (նշված արարքի հատկանիշներով քանի՞ քրեական վարույթ է հարուցվել):
2. Դրանցից քանի՞սն են վերաբերել «Երկակի նշանակության ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» ՀՀ օրենքի իմաստով երկակի նշանակության ապրանքների մաքսանենգությանը, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության պետական սահմանով դրանք ապօրինի տեղափոխելուն:
3. Վերոնշյալից քանի՞ դեպքում ո՞ր մարմնի կողմից է իրականացվել նախաքննությունը/հարուցվել քրեական վարույթը:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան